ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

DOI:10.57155/XMAM3600

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲՐԳՈՒԹԵՆՑԻ ԳԱՆՁԵՐՆ ՈՒ ՏԱՂԵՐԸ

Բանալի բառեր՝ *Հովհաննես Բրգութենց, Ոստան քաղաք, գանձ, տաղ, ձեռագիր, Աղթամար կղզի, Սուրբ Խաչ եկեղեցի, Թովմաս առաքյալ:*

Հովհաննես վարդապետ Բրգութենց Ոստանցու գրական ժառանգության մեջ առանձնակի տեղ ունեն Աղթամարի Ս. Խաչին և Ս. Թովմաս առաքյալին ձոնված գանձերն ու տաղերը: Հովհաննես Բրգութենցի մասին հիմնական աղբյուրը նրա աշակերտի թողած չափածո հիշատակարանն է՝ 1424 թ. Հովհաննես գրչի ընդօրինակած ձեռագրում (Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, ՄՄ 2077), որը հետագայում՝ 1582 թ., պատկանել է Հովհաննես Բրգութենցին[1]: Համաձայն Ներսես վարդապետ Ակինյանի՝ չափածո հիշատակարանի հեղինակը Հովհաննես Բրգութենցի աշակերտ Ներսես աբեղա Բաղիշեցին է[2]: Ն. Ակինյանը, հիմնվելով այդ և այլ սկզբնաղբյուրների վրա, շարադրել է Հովհաննես վարդապետ Բրգութենցի կյանքը և գիտամանկավարժական գործունեությունը[3]:

Հովհաննես Բրգութենցը ծնվել է Ոստան քաղաքի մոտ գտնվող Վառնիշատ գյուղում: Նրա ծնողներն էին Ղուլիջանը և Նուբարը, եղբայրներից հայտնի են երկուսի անունները՝ Մուրատ և Ոսկեան, նաև նրանցից մեկի զավակի անունը՝

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.թ., tumanyan.lusi@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 18, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 29, 2022:

1 «Թէ որ զաւակ Սիոն ունի, / Արքայութիւն բաժին լինի, / Որ եւ լսեաց այնմ բանի / Փիլիսոփայն քաջ եւ արի, / Զոր Գրիգորի նման լինի, / Նարեկա վանից վանականի, / Հայոց յազգէ ծնեալ լինի, / Ի յՈստանա մեծ գաւառի, / Որ մականուն Բրուք ասի, / Եւ Յովհաննէս նա յորջորջի, / Ի բնէ նա աշակերտի, / Ներսէս քաջ վարժապետի, / Որով բանի հմուտ լինի, / Զնարեկացին յորդ մեզ պատմի, / Եւ Հին ու Նոր Կտակարանի / Ի վեր է հան զիմաստ բանի: / Ստացաւ զգիրս քարոզի / Յիշատակ անջնջելի, / Ի յամերամ ժամանակի, / Եւ ծնաւղացն իւրոյն բարի՝ / Ղուլիջանի եւ Նուբարի, / Եւ եղբարցն հարազատի՝ / Ոսկեւանի եւ Մուրատի, / Եւ եղբաւր որդոյն Բահլուլի, / Անփոռձ պահէ Տէր ի յերկրի: / Է նա բնական Վառնիշատցի, / Ի Պատրկայ մենաստանի, / Որ է հանդէպ Ոստան քաղքի, / Մաւրըն լուսոյ Աստուածածնի, / Եւ Գեորգեա Զօրավարի, / Եղիշէի դանբարանիւ, / Երախտաւոր *հայոց ազգի...». ՄՄ 2077, 313աբ: Մայր* ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, ձեռ. 2077-ի նկարագրող՝ ***Յ. Քէօսէեան***, խմբ.՝ ***Գ. Տէր-Վարդանեան***, Երևան, 2012, էջ 1366-1367:

2 **Հ. Ներսէս վ. Ակինեան,** «Յովհաննէս վ. Բրգութենց Ոստանցի գանձասաց», *ՀԱ,* 1937, թիւ 1-5 (այսուհետև՝ Յովհ. Բրգութենց), էջ 210:

3 **Հ. Ներսէս վ. Ակինեան,** *Բաղէշի դպրոցը* (1500-1704), Վիեննա, 1952 *(այսուհետև՝ Բաղէշի դպրոցը)*, էջ 56-66, «Յովհ. Բրգութենց», էջ 210-215:

Բահլուլ: Հովհաննես Բրգութենցը եղել է Պատրկի վանքի միաբան, ապա Բաղեշում աշակերտել է Ներսես վարդապետ Ամկեցուն: Ն. Ակինյանը ենթադրում է, որ Հովհաննես Բրգութենցը վարդապետական գավազան է ստացել մոտավորապես 1570 թ., իսկ 1575 թ. Բաղեշում Հովհաննես գրչի ընդօրինակած Ավետարանի ստացող Բրգութենցն արդեն հիշվում է որպես վարդապետ[4]:

Հովհաննես վարդապետի և նրա ծնողների անունները գրված են նաև իրեն պատկանող այլ ձեռագրերի հիշատակարաններում: Երբ Հովհաննես Բրգութենցը Պատրկի վանքի միաբան էր, նրա պատվերով ընդօրինակվում է Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ը (ՄՄ 852), ուր նա խնդրում է հիշել իրեն, իր ծնողներին, եղբայրներին, եղբորորդուն. «Ես՝ Յովաննէս վարդապետ զՈստանայ, որ սուրբ տառս ըստացայ յիշատակ ինձ եւ իմ ծնօղացն՝ Ղուլիջանին եւ Նուբարին, եւ եղբարցն՝ Մուրադին, Ոսկէվանին, եւ եղբօրորդոյն՝ Բահլուլին, եւ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց եւ ննջեցելոց, եւ Աստուած ողորմի ասացէք նոցա. Ամէն: Գիրքս Յովաննէս վարդապետին է յՈստանայ, ի սուրբ ուխտէն Պատրկայ, որ հանդէպ քաղաքին Ոստանայ»[5]:

Հովհաննես վարդապետը ծավալել է մանկավարժական գործունեություն և ուսուցանել բազմաթիվ աշակերտների, որոնցից են եղել Սիմեոն Ապարանցին և Բարսեղ Գավառացին[6]: Վերջիններս իրենց բազմիմաց ուսուցչի մասին թողել են հիշատակություններ: Բարսեղ վարդապետը, որը նաև հմուտ և վայելչագիր գրիչ էր, իր ընդօրինակած մատյաններում ակնածանքով է տալիս ուսուցչի անունը: Այսպես, 1598 թ. Բաղեշի Ամրդոլու վանքում ընդօրինակած «Մեկնութիւն Գործոց առաքելոց» ձեռագրում (ՄՄ 2605) Բարսեղ վարդապետը գրում է. «Այլեւ ուսուցչին իմոյ՝ քաջ հռետորին Յովաննէս բաբունապետին, որ մականուն Բրկութենց ասի, եղիցի յիշատակ մատեանս այս...»[7], իսկ 1604 թ. գրած «Մեկնութիւն Ավետարանին Մատթէի» մատյանի (ՄՄ 1282) հիշատակարանում նշում է. «նաեւ զուսուցանող վարժապետն իմ զՅովաննէս բաբունապետն, որ մականուն Բրգութենց կոչի»[8]:

Հովհաննես Բրգութենցի մյուս աշակերտը՝ Սիմեոն Ապարանցին, իր Վիպասանության մեջ ևս անդրադարձել է ուսուցչին՝ ձոնելով նրան գեղեցիկ տողեր:

---

4 *Բաղէշի դպրոցը*, էջ 57, «Յովհ. Բրգութենց», էջ 210: Ն. Ակինյանը նշել է Հովհաննես գրչի ձեռագրի թվահամարը Երևանի պետական թանգարանում՝ 138, որն այժմ ՄՄ 7548 ձեռագիրն է. տե՛ս *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ, ցանկերը և համեմատական տախտակները՝ *Օ. Եգանյանի*, Երևան, 1970, էջ 1525:

5 ՄՄ 852, 1ա, 65բ, 263բ, 271ա: *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, կազմ.՝ *Օ. Եգանեան*, Երևան, 2007, էջ 993-994:

6 *Բաղէշի դպրոցը*, էջ 59, «Յովհ. Բրգութենց», էջ 212:

7 ՄՄ 2605, 211ա: *Բաղէշի դպրոցը*, էջ 60, «Յովհ. Բրգութենց», էջ 212:

8 ՄՄ 1282, 261բ: *Բաղէշի դպրոցը*, էջ 60, «Յովհ. Բրգութենց», էջ 212:

Սիմեոն վարդապետը Բրգութենցին համեմատել է հրեշտակների և պայծառ արևի հետ. «Զի հրեշտակացն էր նա սարաս, / Անհամեմատ յերկրաւորացս, / Սըրբազանիցըն գերադաս, / Տէր Յովհաննէս Հոգւովն օծեալս... / Արևն ի մայրն վերադարձած, / Արուսեկին պայծառացած...»: Նշում է նաև Հովհաննես վարդապետի՝ գանձեր և մեղեդիներ հեղինակելու հանգամանքը. «Իմաստութիւնն արձանացած, / Գանձ, մեղեդի, երգ սըրբասաց, / Ըզհոգևորն պըտուղ շըրթանց, / Գըրով թողեալ աշակերտաց...»[9]: Այս օրինակները վկայում են հայ միջնադարում տիրող ուսուցիչ-աշակերտ ակնածալից հարաբերությունների մասին ընդհանրապես:

Մեծանուն այս վարդապետին անդրադարձել է նաև պատմագիր Առաքել Դավրիժեցին՝ որպես նրա ուսուցիչ նշելով Ներսես վրդ. Ամկեցուն, իսկ որպես աշակերտ՝ Բարսեղ վրդ. Գավառեցուն. «Այլեւ էր ինքն Բարսեղ վարդապետն ի գաւազանէն՝ որ ի Տաթեւացւոյն յառաջ եկեալ եւ սերեալ, այսպիսի կարգաւ: Նախ՝ Գրիգոր Տաթեւացին, նորին աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշէնցին. նորին՝ Զորթան Գրիգոր Արճիշեցին. նորին՝ Ներսէս, որ Մատաղ ասի. նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրգութ Յովհաննէս Ոստանցին. նորին՝ Բարսեղ Գաւառցին, որ է այս Բարսեղս, որոյ վասն բանս է: Սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւսայ, զորոյ մականուն Բեղլու ասեն, զի մեծ էր բեղն: Սորին աշակերտ Մելքիսէթ Երեւանցի, ի գեղջէն՝ որում անունն էր Վժան»[10]:

Մինչև այժմ Հովհաննես վրդ. Բրգութենցից հայտնի էին հետևյալ ստեղծագործությունների բնագրերը, որոնց անդրադարձել է Ներսես Ակինյանը[11].

1. «Գանձ Գետարգել Սուրբ Նշանին». Ն. Ակինյանը որպես աղբյուր նշել է այն ժամանակ Էջմիածնի Մատենադարանին պատկանող, իսկ այժմ՝ ՄՄ 2672 ձեռագիրը (404բ-6ա),

2. «Տաղ Գետարգել Սուրբ Նշանին» (ՄՄ 2672, 406բ),

3. «Պատմութիւն ամենազօր սուրբ Խաչին, որ պարգեւեցաւ ի թագաւորացն Յունաց Վասլի եւ Կոստանդեայ, եւ բերեալ եդաւ ի սահմանս Մոկաց». Ն. Ակինյանը որպես աղբյուր նշել է Եղմ. 1428 և Նիկոսիայի հմր. 1 ձեռագրերը: Սույն գործը, սակայն, առկա է նաև ՄՄ 5128 ձեռագրում (235ա-239ա)[12]:

Անդրադառնանք մեզ հետաքրքրող գանձերին ու տաղերին: Խաչիկ Լևոնյա-

---

9 **Սիմէօն վ. Ապարանցի,** *Վիպասանութիւն սակս Պահլաւունեանցն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի,* Վաղարշապատ, 1870, էջ 131-132: *Բաղէշի դպրոցը,* էջ 60-61, «Յովհ. Բրգութենց», էջ 212-213:

10 **Առաքել Դաւրիժեցի,** *Գիրք պատմութեանց,* աշխ. ***Լ. Ա. Խանլարեանի,*** Երևան, 1990, էջ 311:

11 *Բաղէշի դպրոցը,* էջ 65-66:

12 Հովհաննես վրդ. Բրգութենցի նշյալ երեք ստեղծագործությունների բնագրերը պատրաստում ենք հրատարակության:

նը Նարեկավանքին նվիրված իր հոդվածում գրում է, որ Աղթամարի Խաչատուր Բ Շիրոյան կաթողիկոսը Նարեկավանքից ձեռագրեր և թանկարժեք սպասք է փոխադրել Աղթամար՝ այնտեղ թողնելով միայն քայքայվածները: Այդ ձեռագրերից մեկը՝ Գանձարան, բովանդակում է Հովհաննես Բրգութենցի՝ Աղթամարի Ս. Խաչին և Թովմաս Առաքյալին նվիրված ներբողները. «... Աղթամարայ յատկացուց, հոն տանելով նաև նոյն Վանուց եկեղեցւոյն կարեւոր սպասներն և գրչագիրները, հոն թողլով միայն քայքայուածներն ու անպէտները, որոնց մէջ աչքի կ՚զարնէ մասնաւորապէս գանձ գիրք մը, հեղինակուած Բրգութենց մականուանեալ Ոստանցի Յովհաննէս վարդ.էն...: Այդ գանձերը կ՚վերաբերին Աղթամարայ Ս. Խաչին և Թովմաս առաքելոյն իբրեւ ներբողականներ, որոնք ձայնաքաղ են և բաւական կանոնաւոր ոճ մ՚ունին»[13]:

Հետևելով Խ. Լևոնյանին՝ այս նույն տվյալը հաղորդել է նաև Ն. Ակինյանը: Վերջինս գրում է նաև, որ Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը Աղթամարում տեսել է 1602 թ. գրված մի Գանձարան, որում կա Հովհաննես Բրգութենցի՝ 1588 թ. Աղթամարին ձոնված գանձը[14]: Թեև Ներսես Ակինյանը նախորդներից տեղյակ էր Հովհաննես վարդապետի՝ Աղթամարի Ս. Խաչին և Թովմաս առաքյալին նվիրված գանձերի ու տաղերի մասին, սակայն նրան հասու չեն եղել դրանց բնագրերը: Փորձել ենք գտնել նշյալ երկու ձեռագրերը և սույն հոդվածում վերհանել բնագրերը:

Մեծ եղեռնի ժամանակ Աղթամարից փրկված ձեռագրերի մեջ կա մի Գանձարան՝ գրված 1440 թ. Ոստանում Կարապետ գրչի ձեռքով, իսկ պատվիրատուն եղել է Նարեկ գյուղից Պետրոս անունով մի հյուսն, որը բաղձալի ձեռագիրը նախատեսել էր Ս. Թովմաս առաքյալի վանքի համար: 1866 թ. նոյեմբերի 16-ին այս մատյանը Նարեկավանքում տեսել և հիշատակարանն արտագրել է Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը[15]: Տարիներ անց մատյանը հայտնվել է Աղթամարի վանքում, ինչի մասին հուշում է ձեռագրի էջերից մեկում հետագայում անվարժ ձեռքով գրված փոքրիկ գրությունը (210բ): 1915-1916 թթ. այն, ի շարս Վանա լճի կղզիներում պահվող շատ այլ ձեռագրերի, տեղափոխվել է Ս. Էջմիածին[16], իսկ այժմ դա ՄՄ 5404 ձեռագիրն է: Ժե դարում ընդօրինակված այս ձեռագրի վերջում կան կցված թերթեր (211ա-213բ), որոնց վրա ԺԷ դարի գրությամբ ընդօրինակված են Հովհաննես Բրգութենցի՝ Թովմաս առաքյալին ձոնված գանձը

---

13 **Խ. Լեւոնեան,** «Նարեկայ վանքն եւ Նարեկացին», *Բիւզանդիոն հայաթերթ ամենօրեայ*, Կ.Պոլիս, 1903, թիւ 2031:

14 *Բաղէշի դպրոցը*, էջ 63-64:

15 **Ղ. վ. Փիրղալէմեան,** *Նշխարք պատմութեան հայոց*, ՄՄ 6332, էջ 131-132:

16 *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա, կազմ.՝ ***Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան***, Երևան, 1965, էջ 102:

և տաղը։ Քանի որ այս մատյանը պահվել է Նարեկավանքում, ինչպես արդեն վերը տեսանք, ապա ենթադրում ենք, որ հենց սա է նկատի ունեցել Խաչիկ Լևոնյանը։ Յավոք, կան թափված էջեր. բացակայում է գանձի սկզբի հատվածը՝ առաջին և երկրորդ տները և երրորդ տան սկիզբը (գանձն ունի ծայրակապ, այսինքն տների առաջին տառերով կազմվում է հեղինակի անունը՝ ՅՈՎԱՆՆԷՍ, ինչից էլ կռահել ենք պակաս տների քանակը)[17]*, իսկ տաղից միայն առաջին մի քանի տողն է պահպանվել։ Պահպանված թերթերը բավականին քայքայված են, շատ հատվածներում թանաքը ջնջված է, և գիրը դժվարընթեռնելի է, սակայն կարողացանք բնագիրն ամբողջությամբ ընթերցել։ Գանձի վերջին տողերում հեղինակը նշել է իր անունը. «Գրեայ երգող գանձիս Թումային ի Յովաննէս յիմար եւ անարին, Որ մականուն Բըրգութ ձայնէին» (213բ)։*

Ինչ վերաբերում է Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանի՝ Աղթամարում տեսած 1602 թ. ձեռագրին, ապա կարծում ենք, որ այն Թումա Մինասենցի 1445 թ. ընդօրինակած հայտնի Գանձարանն է (ՄՄ 5521), որի վերջին էջերին 1602 թ. Ներսես անվամբ գրիչը հավելել է Հովհաննես վրդ. Քերովբենցի հեղինակած գանձն ու տաղը՝ նվիրված Ապարանից Ս. Նշանին, և Հովհաննես վրդ. Բրգութենցի հեղինակած գանձն ու տաղը՝ նվիրված Աղթամարի Ս. Խաչին[18]*։ Գանձը վերնագրված է «Գանձ Աղթամարայ Սուրբ Խաչին ի Բրգութենց Յովանէս վարդապետէ Ոստանցոյէ», ունի ծայրակապ՝ «ԲՐԳՈՒԹԷ»։ Տաղը վերնագրված է «Տաղ անոյշ ի Բրգութենց Յովանէս վարդապետէ Ոստանցո», ունի ծայրակապ՝ «ՅՈՎԱՆՆԵՍ»։ Այս խորագրերը և ծայրակապերը ևս փաստում են դրանց հեղինակային պատկանելությունը։ Ս. Խաչին և Թովմաս առաքյալին ձոնված գանձերում Հովհաննես Բրգութենցը նշել է նաև դրանց թվականները՝ Ս. Թովմասին նվիրված գանձը հեղինակել է 1579 թ., իսկ Աղթամարին նվիրված գանձը՝ 1586 թ. (տե՛ս ստորև գանձերի բնագրերը)։*

Անդրադառնալով Հովհաննես վրդ. Բրգութենցի՝ Ս. Խաչին նվիրված գանձին, նշենք, որ այն բովանդակում է արժեքավոր պատմական, արվեստաբանական և աստվածաբանական վկայություններ. դրանց մի մասը քաղել է Արծրունյաց Անանուն պատմիչի երկից, մի մասն էլ նկարագրել է որպես ականատես և հայտնել իբրև ժամանակակից։

1. Գանձում ակնարկված է Աղթամարի եկեղեցու կառուցումը Գագիկ Արծ-

---

17 Քանի որ Աղթամարի Ս. Խաչին նվիրված տաղի ծայրակապը «ՅՈՎԱՆՆԵՍ» է, ոչ թե «ՅՈՎՀԱՆՆԵՍ», ուստի ենթադրելի է, որ սույն գանձի ծայրակապը ևս «ՅՈՎԱՆՆԵՍ» է, և պակասում է երեք տուն։

18 ՄՄ 5521, 423ա-431ա։ Օգտվել ենք սույն ձեռագրի (ՄՄ 5521) դեռևս անտիպ նկարագրությունից՝ նախատեսված Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ի համար, նկարագրող՝ Նաիրա Թամամյան։

*ռունի արքայի կողմից. «**Բախարար սիրով բաղձալի, / Աստուածապսակ Գագիկ արքայի, / Ընտրեալ գոլով յազգէն Արծրունի...**» (429բ): Ինչպես հայտնի է, Գագիկ Արծրունի թագավորը Աղթամար կղզում կատարել է ծավալուն շինարարական աշխատանքներ: Նրա նախաձեռնությամբ կղզին պարսպապատվել է խոցելի տեղերից, ունեցել ամուր հիմքերով նավահանգիստ: Թագավորի հրամանով ճարտարապետ Մանուելը կառուցել է արքայական պալատը, իսկ 912-921 թթ. ընթացքում Սուրբ Խաչ եկեղեցին, որը հայ ճարտարապետական մտքի, մշակութաստեղծ ոգու հիասքանչ արգասիքներից է:*

*2. Նկարագրված է եկեղեցու կառուցման տեղը, անունը՝ Ս. Խաչ, մեծամեծ, սրբատաշ քարերով կառուցված լինելը. «**Հիմունս արկեալ յԱղթամար կղզի, / Շինեաց զտաճարն, որ Սուրբ Խաչ կոչի, / Բարձրաւանդակ ի պատշաճ տեղի, / Մէջ կապուտակ ծովուն որակի: / Տարփատենչ, բարի ամենայն ազգի, / Վիմաւք փակեալ եւ անշարժելի, / Մեծատաշ, դերբկի[19] կոփածով քարի, / Երկաթագամ եւ անխախտելի**» (429բ):*

Ինչպես գրում է Արծրունյաց Անանուն պատմիչը, Գագիկ արքան ամրապնդում է իր երկրի սահմանները՝ ճնշելով թշնամիներին: Երբ իր զորքով արշավում է դեպի Ասորեստանի սահմանը, Կոտոմ բնակավայրում տեսնում է Աղձնյաց հայ իշխաններին պատկանող հին հեթանոսական ամրոցը, որը նվաճել էր արաբական զուրարիկ ցեղը: Գրավելով տարածքը, արքան քանդում է Կոտոմի ամրոցը և քարերը բերելով՝ կառուցում Ս. Խաչ եկեղեցին. «ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց, ի գեաւղն Կոտոմ... եւ զշինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձեւ պղծալից յարկացն զտաճար փառաց»[20]:

*«**Վիմաւք փակեալ եւ անշարժելի, / Մեծատաշ, դերբկի կոփածով քարի, / Երկաթագամ եւ անխախտելի**» բառերով հեղինակը հավանաբար ակնարկում է եկեղեցու՝ ամուր և անխախտելի հիմք ունենալը, շինարարության մեջ մեծամեծ քարերի գործածությունը և պատերի՝ սրբատաշ քարերով երեսպատված լինելը:*

Եկեղեցու ճարտարապետությունը նկարագրելիս Արծրունյաց պատմիչը չի մանրամասնում շինարարական առանձնահատկությունները, սակայն արքու-

---

19 Ծնթ. 57:

20 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, աշխ. *Գ. Տէր-Վարդանեանի*, Մատենագիրք Հայոց, ԺԱ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 290: Աշխարհաբարը՝ «Աղձնիքի իշխանական տան մի ամրոց՝ Կոտոմ անունով գյուղում... հիմքից տապալեց ամրոցի շինությունը, նրա քարերը, բարձեց [նավերը] և բերեց ծովի վրայով, տվեց սուրբ եկեղեցու շինության համար: Եվ կուսական ձև ունեցող պղծալից շենքի փոխարեն կանգնեցրեց փառաց տաճարը». **Թովմա Արծրունի և Անանուն,** *Պատմություն Արծրունյաց տան,* ներածություն, թարգմ., ծանոթ.՝ *Վ. Վարդանյանի,* Երևան, 1978, էջ 300:

նական պալատի և նավահանգստի պարագայում, որոնք ևս կառուցել էր Գագիկ արքան, այդ մանրամասները նշված են: Պալատի համար պատմագիրը գրում է. «...որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն, գունդ անապակ կրոց եւ քարի, իբրեւ զհալուածս կապարի եւ պղնձոյ ընդ միմեանս խառնեալ», անգամ նշում է կիրառված շինանյութերի քանակը. «Պատմեաց մեզ եւ հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրեւ երկերիւր հազար...»[21]: Նավահանգստի համար պատմագիրը ևս մանրամասնում է. «Ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բեւեռապինդս»[22]: «Երկաթագամ» նշանակում է երկաթով գամված, ամրացված, նույն բևեռապինդ իմաստն ունի[23], սակայն, մենք որևէ հիմք չունենք պնդելու, որ եկեղեցին կառուցելիս օգտագործվել է երկաթ (թեև պալատի դեպքում, ինչպես տեսանք, գործածվել է), ուստի կարծում ենք, որ գանձում հեղինակն այս բառով ակնարկում է եկեղեցու՝ ամուր հիմքը:

3. Գանձում տրված է եկեղեցու ճարտարապետական տիպը. ***«Գրմբեթաւոր տաճար սքանչելի, / Աղթամարայ Սուրբ Խաչ գովելի... /Իւթեղ, չքնաղ յարկ չնաշխարհի, /Զորեքանկեան եւ քառակուսի» (429բ, 430բ)****: Ս. Խաչ եկեղեցին քառախորան, խորանամերձ անկյուններում երեք քառորդ խորշերով, խաչաձև գմբեթավոր հորինվածքով կառույց է, ճարտարապետական առումով նման Արծրունիների հնագույն սրբավայրերից Զորադիրի Սուրբ Խաչին[24]: Հ. Օրբելին նշում է, որ ճարտարապետական այն հորինվածքը, որն ունի Ս. Խաչը, արդեն իսկ տարածված էր Հայաստանում. «По плану он представляет один из вариантов распространенного типа армянских церквей: крест, образованный четырьмя апсидами-экседрами, которые в восточном и за-*

---

21 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, 2010, էջ 289: Աշխարհաբարը՝ «Սրա որմերի լայնությունն ուներ 3 մեծամայլ չափ տարածություն: Որմերը անապակ կրի ու քարի զանգվածներ էին, որ իրար էին խառնված, ինչպես կապարի ու պղնձի համաձուլվածքը», «Քաղաքում աշխատող գործավորներից վստահելի մի վերակացու մեզ պատմեց, որ պալատի շինության վրա բանեցվել է 200 հազար լիտր երկաթ...». **Թովմա Արծրունի և Անանուն,** 1978, էջ 298-299 (երկաթի քանակը հաշված է լիտրով. մեկ լիտրը հավասար է 326 գրամի): Աղթամարի պալատի ճարտարապետական նկարագրի մասին տե՛ս **И. Орбели**, *Избранные труды,* М., 1968, т. 1, с. 34-68. **Տ. Գրիգորյան,** «Աղթամարի Արծրունյաց պալատը և հայ-բյուզանդական գեղարվեստական փոխառնչությունները զարգացած միջնադարում (IX-X դդ.)», *ԲՄ*, 29, 2020, էջ 401-420:

22 **Թովմա Արծրունի եւ Անանուն,** 2010, էջ 288: Աշխարհաբարը՝ «Ծովի խորահատակ հիմքերի բեռանին նա դրեց ահավորատես, հաստահեղույս, բևեռապինդ դռներ». **Թովմա Արծրունի և Անանուն,** 1978, էջ 297:

23 *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի* (*ՆՀԲ*), հ. Ա, կազմ.՝ ***Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Միւրմէլեան, Հ. Մ. Աւգերեան,*** Վենետիկ-Ս. Ղազար, 1836, էջ 686:

24 **Ս. Մնացականյան,** *Վարպետաց վարպետներ,* Երևան, 1982, էջ 36-38:

падном крыле несколько отдалены от центрального подкупольного квадрата; в углах креста, между экседрами, находятся глубокие, примерно в три четверти круга, ниши... Этот вариант плана, повторяю, очень распространенного и в Армении и в Грузии, притом в обеих этих странах особенно излюбленного в местах пребывания епископских или патриарших кафедр»[25]*:*

*4. Նշված է ճարտարապետի անունը՝ Մանուել. **«Վիմաւք մածեալ անդրղրդելի, / Մանուէլ կառոյց ձեռամբքն իւրովի» (430ա)**: Արծրունյաց պատմագիրը մեզ հստակ փոխանցել է ճարտարապետի անունը՝ Մանուել, իսկ պատկերաքանդակների թեմաների հարցում նրա խորհրդականը եղել է մի կրոնավոր, որի անունը մեզ հայտնի չէ. «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ եւ զաւրաւոր ի գործս իւր, հրաշակերտէ զեկեղեցին զարմանագործ արուեստիւ. եւ զոր վերագոյնն ցուցաք՝ կրաւնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն...»*[26]*:*

*5. Թվարկված են պատերի պատկերաքանդակները՝ որթագալարները, բազմատեսակ թռչուններն ու կենդանիները, հինկտակարանյան մարգարեներն ու նորկտակարանյան առաքյալները, իսկ «Հոր անդրանիկ» ասելով նկատի ունի Քրիստոսին. **«Որթըն սորեկ, ազնիւ, պիտանի / Քո սուրբ գաւիթս տնկեալ բուսանի, / Ժողով գնդի սուրբ մարգարէի, / Սուրբ առաքեալքն ի քեզ նըկարի: / Աւետարանիչք Նորոյս Կտակի / Կենդանագրեալ ի չորից կողմի, / Ազգի ազգի թռչունք թեւալի / Են նկարեալ յորմն տաճարի, / Այլեւ յոլով կենդանիք յայտնի / Սարսափելի մարդկան երեւի, / Հաւր անդրանիկն ի քեզ իջանի, / Իբր տաճարն Սողովմոնի» (430բ)**:*

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին արտաքուստ ամբողջությամբ հարդարված է պատկերաքանդակներով, և գլխավորապես դրանց շնորհիվ դարձել է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի անկրկնելի կոթողներից մեկը: Պատկերաքանդակների գոտիներն են՝ Տերևների չընդհատվող գոտի, Թեմատիկ հարթաքանդակների գոտի (Գլխավոր գոտի), Կենդանագլուխների (Պահպանիչ խորհրդանշանների) գոտի, Որթագալարի (Որթատունկի) գոտի, Դիմաքանդակների և զինանշանների (Իշխանների) գոտի, Կենդանավազքի գոտի և չորս ավետարանիչների պատկերները[27]*:*

***«Որթըն սորեկ, ազնիւ, պիտանի / Քո սուրբ գաւիթս տնկեալ բուսանի»**: Եկեղեցին բոլորող գոտիներից մեկը որթագալարի գոտին է, որը գրեթե չունի ընդհատումներ: Որթագալարի մեջ ներկայացված են առանձին-առանձին տեսա-*

---

25 **И. Орбели**, նշվ. աշխ., էջ 70-71.

26 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, 2010, էջ 291:

27 **И. Орбели**, նշվ. աշխ., էջ 77-78: **Ս. Մնացականյան**, *Աղթամար*, Երևան, 1983, էջ 43:

բաններ, սակայն հորինվածքային առումով՝ որթագալարները շարունակական շղթա են կազմում: Այս գոտում պատկերված են այգու հովանավորները, այգու մշակման և պահպանության (մենամարտ կենդանիների արջերի, առյուծների հետ), բերքահավաքի, գինու պատրաստման և բերքի վայելման տեսարաններ[28]*:*

«Ժողով գնդի սուրբ մարգարէի, / Սուրբ առաքեալքն ի քեզ նըկարի»: *Եկեղեցու բարձրաքանդակներում տեղ են գտել հինկտակարանյան մի շարք տեսարաններ և մարգարեների պատկերներ: Պատկերված են՝ հարավային ճակատին Իսահակի զոհաբերությունը, Հովնան մարգարեն, Դավիթ թագավորը և Գողիաթը, մեդալիոնների մեջ Հովել և Նավում մարգարեները, Սամուել մարգարեն, արևելյան ճակատի մի ծայրում՝ Եղիա մարգարեն ամբողջ հասակով, մյուս ծայրում՝ Հովհաննես Մկրտիչը, հյուսիսային ճակատին՝ Ադամը և Եվան, Սամփսոնը, Դանիել մարգարեն առյուծների գբում, Եսայի մարգարեն, Եզեկիել մարգարեն և այլն: Առաքյալներից պատկերված են Հայոց լուսավորիչներ Թադեոսը և Բարդուղիմեոսը՝ արևելյան ճակատին, կենտրոնական լուսամուտի կողքերին:*

«Աւետարանիչք Նորոյս Կտակի / Կենդանագրեալ ի չորից կողմի»: *Եկեղեցու ճակատներին չորս ավետարանիչների ամբողջ հասակով բարձրաքանդակներն են՝ Մատթեոս (արևմտյան ճակատ), Մարկոս (հյուսիսային ճակատ), Ղուկաս (հարավային ճակատ), Հովհաննես (արևելյան ճակատ)*[29]*:*

«Ազգի ազգի թռչունք թեւալի / Են նկարեալ յորմն տաճարի»: *Բարձրաքանդակներում ներառված են նաև զանազան թռչունների, կենդանիների, առասպելական կենդանիների, հուշկապարիկների պատկերներ: Թռչունների պատկերները շատ են հատկապես «Կենդանավազքի» գոտում. պատկերված են կտուցներում օղակ բռնած արծիվներ, կռվի պատրաստ աքաղաղներ, օձի հետ կռիվ տվող թռչուններ և այլն*[30]*:*

«Այլեւ յոլով կենդանիք յայտնի / Սարսափելի մարդկան երեւի»: *Եկեղեցու քանդակազարդ գոտիների մեջ իր ոճով առանձնանում է կենդանագլուխների շարքը, որ նկատելի կերպով դուրս ցցված է: Լ. Դուրնովոն և Աս. Մնացականյանը այս քանդակները համարել են Կոտոմից բերված հայկական հին հեթանոսական տոտեմների քանդակներ*[31]*: Ինչպես արդեն վերը նշել ենք, Գագիկ արքան Աղթամարի եկեղեցին կառուցել է Կոտոմի ամրոցից բերված քարերով: Ընդ*

---

28 **И. Орбели**, նշվ. Աշխ., էջ 135-158, **Ա. Ասլան,** «Սուրբ Խաչի պատկերամանդակները», *Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը,* հեղինակ-կազմող՝ ***Կ. Մաթևոսյան***, Ս. Էջմիածին, 2013, էջ 76-77:

29 **Ս. Տեր-Ներսիսյան**, *Հայ արվեստը միջնադարում,* Երևան, 1975, էջ 78-88:

30 Կենդանավազքի գոտու նկարագրությունը տե՛ս **Աս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 133-144:

31 **Աս. Մնացականյան**, «Հեթանոսական ժամանակների քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ վանքի ոռմնաշարվածքում», *ԼՀԳ,* 2, 1983, էջ 83-93: **Л. Дурново**, *Очерки изобразительного искусства средневековой Армении,* Москва, 1979, с. 73-74:

որում, Արծրունյաց Անանուն պատմիչի գրածից պարզ է, որ այդ քարերը պատկանել են Կոտոմի ամրոցի հեթանոսական տաճարին[32]*: Պատմիչը նշում է, որ բագնաձև տաճարի փոխարեն կառուցեց փառքի տաճար. «կանգնելով փոխանակ բագնաձեւ պղծալից յարկացն՝ զտաճար փառաց: Աստանօր կատարի ասացեալն ի մարգարէէն՝ «որ հանէ զպատուականն յանարժանէն՝ իբրեւ զբերան իմ եղիցի», ուր միշտ հանգչի Հոգին Սուրբ, վերագրելով զմարդիկ յանստուեր լոյսն»*[33]*:*

Այն մասին, թե ինչպես են հեթանոսական այդ քանդակները ներդաշնակվել Աղթամարի քրիստոնեական քանդակների համակարգին, Աս. Մնացականյանը գրում է. «Դրա համար անդրադառնանք վանքի արևելյան պատի կենտրոնում զետեղված, դրախտի անդրանիկ բնակիչ, Ադամ նախահոր քանդակապատկերին: Նրա աջ ու ձախ կողմերում տեղ են գտել հեթանոսական կենդանաքանդակները, իսկ տեսարանի ընդհանուր իմաստը արձանագրությամբ պատշաճեցվել է. «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և գազանաց» մտքին: Դա առնված է Աստվածաշնչի Ծննդոց գրքի Բ գլխի 20-րդ և հաջորդ տներից, ուր ասված է. «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնի, ամենայն գազանաց վայրի»: Այս եղանակով են, ահա, Կոտոմի կուռքերը ենթարկվել քրիստոնեական գաղափարներին և տեղ գտել աստվածաշնչային գաղափարաքանդակների շարքում»[34]*:*

Հետաքրքրական է Կ. Մաթևոսյանի դիտարկումը հեթանոսական տոտեմների և Ս. Խաչ եկեղեցու քանդակազարդման վերաբերյալ. «Միաժամանակ չենք բացառում, որ Աղթամարի եկեղեցու կառուցման ժամանակ հենց Կոտոմի քանդակների առկայությունն է ծնունդ տվել այն գաղափարին, որ թագավորական եկեղեցին պետք է արտաքինից ամբողջովին քանդակազարդվի»[35]*:*

Հաւր անդրանիկն ի քեզ իջանի, / Իբր տաճարն Սողոմմոնի: *Եկեղեցու հարավային ճակատին պատկերված են գահին բազմած Քրիստոս և գահին բազմած Ս. Աստվածամայրը Մանկան հետ: Քրիստոսի ևս մեկ ահեղ պատկեր կա արևմտյան ճակատին՝ Գագիկ Արծրունին Ս. Խաչ եկեղեցու մանրակերտը պարզել է Քրիստոսին:*

6. Գանձում ակնարկված է Աղթամարի թագավորանիստ և կաթողիկոսա-

---

32 **Կ. Մաթևոսյան,** *Պատմահնագիտական դիտարկումներ,* Երևան, 2020, էջ 82-83:

33 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, 2010, էջ 290: Աշխարհաբարը՝ «Եվ կռատան ձև ունեցող պղծալից շենքի փոխարեն կանգնեցրեց փառաց տաճարը: Այստեղ կատարվեց մարգարեի ասածը՝ «Եթե պատվականը անարժանից զատի, իմ բերանի պես կդառնա» (Երեմ. ԺԵ, 19), ուր միշտ հանգչում է Սուրբ Հոգին, մարդկանց ընծայելով անստվեր լույսը». **Թովմա Արծրունի և Անանուն,** 1978, էջ 300:

34 **Աս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 92:

35 **Կ. Մաթևոսյան,** *Պատմահնագիտական դիտարկումներ,* էջ 93:

նիստ լինելը. ***«Թագաւորաց գահ բարձր ի յերկրի, / Թագ բերկրանաց Հայոց մեծ ազգի, / Աթոռ փառաց, տեղ պատրիարգի, / Սրահ լուսոյ, ճեմարան Բանի» (430բ)****: Աղթամարը, ինչպես հայտնի է, բնակելի է եղել վաղնջական ժամանակներից. այստեղ գտնվել են նախաուրարտական ժամանակաշրջանի կիկլոպյան ամրոցի պատերի մնացորդներ, հայտնաբերվել է նաև Մենուա թագավորի (Ք.ա. 810-786) մի սեպագիր արձանագրություն[36]: Դ-է դարերում Աղթամարը եղել է Ռշտունի նախարարների ամրոց-բնակատեղին, ապա անցել է Արծրունի իշխաններին և վերածվել բերդաքաղաքի: 908 թ. Գագիկ Արծրունին Վասպուրականում թագավորություն է հռչակում՝ Աղթամարը վերածելով քաղաքական և հոգևոր-մշակութային կենտրոնի: Ավելի ուշ՝ 1113 թ., Աղթամարում Արծրունիների ստեղծած թագավորության հենքի վրա հաստատվում է կաթողիկոսական Աթոռ[37]:*

7. Վկայված է Նարեկավանքին մոտ գտնվելը. ***«Մերձ առ շիրմին վեհին Գրիգորի՝ / Աստուածաբան սուրբ վարդապետի, / Որ հանգուցեալ ի Նարեկ գեղջի՝ / Հուպ առ հիմն սուրբ Սանդրխտի» (430բ)****: Ինչպես հայտնի է, Նարեկավանքը կառուցվել է Ժ դարում, Վանա լճին հարավային ափին մոտ՝ Նարեկ գյուղում: Վանքը կառուցվել է մեզ հայտնի առաջին հայ նահատակի՝ հայոց Սանատրուկ արքայի դուստր ս. Սանդուխտի մասունքների վրա: Համաձայն Հ. Ոսկյանի նկարագրության՝ «Վանքը շինված է թել քարերով, պարսպապատ է եւ բաղկացած սրբուհի Սանդուխտի եւ Ս. Աստուածածնի տաճարներէն, ս. Գրիգորի մատուռէն, ժամատնէ մը եւ զանգակատնէ մը»[38]: Ս. Սանդուխտի մասունքները գտնվել են սրբուհու անունը կրող գլխավոր եկեղեցու հարավային խորանի տակ: Եկեղեցուն հարավից կցված էր Ս. Աստվածածին եկեղեցին, իսկ արևելքից կցված էր ս. Գրիգոր Նարեկացու մատուռ-դամբարանը: Ժամատան մեջ գտնվել են վանահայրեր Անանիա և Հովհաննես Նարեկացիների գերեզմանները[39]:*

8. Նշված է Աղթամարի՝ ոչ միայն կաթողիկոսանիստ լինելը, այլև Աղթամարի կաթողիկոսների՝ Արծրունյանց տոհմից սերելու հանգամանքը. ***«Հայրապետաց պարքըն զետեղի, / Մեծ եւ երջանիկ քաջ մետրապալտի, / Ի քեզ նստեալ տոհմէն Արծրունի, / Կաթուղիկոս հանուրց Հայկազնի» (430բ)****: Աղթամարի առաջին կաթողիկոս Դավիթ Ա. Թոռնիկյանը (1113-1165) որդին էր Ամուկ ամրոցի տեր Աբդլմսեհ իշխանի և սերում էր Խեդենիկ իշխանից, որն Արծրունի թագավորների տոհմից էր: Ուստի՝ Աղթամարի կաթողիկոսները շարունակողներն*

---

36 **И. Орбели**, նշվ. աշխ., էջ 31. **Н. Арутюнян,** *Корпус урартских клинообразных надписей,* N 79, Ереван, 2001, с. 100-101.

37 **Մ. Եպս. Իզմիրլեան**, *Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Սիս ու Աղթամար*, Ս. Էջմիածին, 2008, էջ 99-103:

38 **Հ. Ոսկեան,** *Վասպուրական-Վանի վանքերը, Մաս Ա.,* Վիեննա, 1940, էջ 190:

39 Նույն տեղում, էջ 190-192:

էին Արծրունյաց թագավորների՝ միայն թե աշխարհիկի փոխարեն հոգևոր տիտղոս կրելով: Մինչև ԺԳ դարավերջը Աղթամարի կաթողիկոսական Աթոռը Խեդենեկյան-Արծրունիների ձեռքին էր, իսկ 1272 թվականից, երբ կաթողիկոս է ընտրվում Ստեփանոս Սեֆեդինյանը, Աթոռն անցնում է Սեֆեդինյաններին, որոնք մայրական կողմից Արծրունիների սերունդն էին և մինչև ԺԶ դարավերջն իրենց ձեռքում են պահել Աթոռը[40]:

«Կաթուղիկոս հանուրց Հայկազնի»: Ուշագրավ է, որ Վասպուրականում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում ևս Աղթամարի կաթողիկոսները շատ հաճախ հիշվում են որպես «Ամենայն Հայոց եւ Աղթամարայ»՝ արտահայտելով իրենց ձգտումը յուրացնելու կաթողիկոսի ընդհանրական իշխանությունը[41]: Այս իրողությունը պայմանավորված էր նրանով, որ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը գտնվում էր Կիլիկիայում: Ուստի, Աղթամարի կաթողիկոսները փորձում էին իրենց իշխանությունը ընդարձակել ու հեղինակությունը բարձրացնել, ինչպես նաև ծավալել համազգային գործունեություն:

9. Որպես Կաթողիկոսական աթոռ՝ Աղթամարում օրհնվել է ս. Մյուռոն, ինչը ևս ակնարկված է այս գանձում, և պետք է արձանագրել, որ գանձում կա հավաստի տվյալ այն մասին, որ Աղթամարում ս. Մյուռոնը օրհնվել է Թովմաս առաքյալի Աջով[42]. ***«Սուրբ Միւռոնի նիւթն ի քէն բաշխի, / Որ է նման Հոգոյն ճշմարտի, / Աւրհնեն Աջով սրբոյն Թումայի, / Որ մխեցաւ ի կողն Յիսուսի» (430բ-1ա)***:

Ինչպես հայտնի է, 1113 թ. Աղթամարում Արծրունիների ստեղծած թագավորության հենքի վրա հաստատվում է կաթողիկոսական Աթոռ: Ուսումնասիրողները կարծում են, որ դրա համար կային հիմնավոր պատճառներ. Հայոց հայրապետական Աթոռն այդ ժամանակաշրջանում գտնվում էր բուն Հայաստանի տարածքից դուրս՝ Կիլիկյան Հայաստանում, ուստի՝ քաղաքական, տնտեսական, ազգապահպան, մշակութային և եկեղեցական բազմաթիվ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ էր ունենալ երկրում գտնվող հոգևոր առաջնորդ[43]: Աղթամարում Կաթողիկոսական Աթոռի հաստատումը հիմնավորվում էր նաև նրանով, այն նախկինում եղել է թագավորական և կաթողիկոսական նստավայր[44]:

---

40 **Վ. Վարդանյան,** *Աղթամարի կաթողիկոսության պատմություն,* Ս. Էջմիածին, 2017, էջ 29, 34: **Կ. Մաթևոսյան**, «Աղթամարի կաթողիկոսությունը», *Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը,* էջ 89:

41 **Վ. Թորոսյան,** *Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. դարի կեսեր - ԺԲ. դարի սկիզբ),* Երևան, 2018, էջ 170:

42 **Լ. Թումանյան,** *Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները,* Երևան, 2020, էջ 21, 34:

43 **Վ. Վարդանյան**, «Աղթամարի կաթողիկոսության հիմնադրման շուրջ», *ՊԲՀ*, 2010, թիվ 2, էջ 70-80, **Կ. Մաթևոսյան**, «Աղթամարի կաթողիկոսությունը», *Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը,* էջ 89-91:

44 **Կ. Մաթևոսյան**, «Աղթամարի կաթողիկոսությունը», «*Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը»,* էջ 86: **Վ. Թորոսյան,** նշվ. աշխ., էջ 161-162:

Մեր կարծիքով, վերոնշյալ հանգամանքներից բացի, կար մեկ կարևոր պատճառ ևս. եկեղեցական-ծիսական արարողությունների համար (մկրտություն, ձեռնադրություն, եկեղեցու օծում, ևն) անհրաժեշտ էր ս. Մյուռոն, որն օրհնելու իրավունք ունի միայն կաթողիկոսը: Ուստի հարց է առաջանում, ո՞ր սրբի մասունքն ուներ Աղթամարը՝ ս. Մյուռոն օրհնելու համար: Հովհաննես Բրգութենցի գանձը մեզ եզակի տեղեկություն է փոխանցում՝ ս. Մյուռոնը օրհնվել է ս. Թովմաս առաքյալի Աջով[45]*:*

Հովհաննու Ավետարանը վկայում է, որ Թովմաս առաքյալը, լսելով Քրիստոսի Հարության լուրը, ասում է. «Եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն, եւ արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս իմ ի կողս նորա, ոչ հաւատամ»: Ութ օր հետո Հիսուս դարձյալ երևում է աշակերտներին և Թովմասին ասում է. «Բեր զմատունս քո եւ արկ այսր, եւ տես զձեռս իմ, եւ բեր զձեռն քո, եւ մխեա ի կողս իմ, եւ մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»: Թովմասը պատասխանում է՝ ասելով. «Տէր իմ եւ Աստուած իմ» (Յովհ. Ի. 24-29): Սրա համար էլ Հովհաննես Բրգութենցը Թովմաս առաքյալի Աջի համար նշում է՝ ***«Որ մխեցաւ ի կողն Յիսուսի»****:*

Այժմ անդրադառնանք Հովհաննես վրդ. Բրգութենցի՝ Թովմաս առաքյալին ձոնված գանձին: Սրա հիմքում սուրբ առաքյալի հայսմավուրքյան վարքն է, որը հեղինակը վերածել է չափածո և երգեցիկ գանձի: Համաձայն Հայսմավուրքի՝ Թովմաս առաքյալը քարոզել և նահատակվել է Հնդկաստանում: Նա Աստծու կամքով վաճառվում է Հնդկաստանից եկած Արբանես անունով վաճառականին, որն առաքյալին տանում է Հնդկաստանի Սեդրոք (Սեդրաք) անունով քաղաքը: Այնտեղ տեսնելով ս. Թովմասի աղոթքի զորությունը՝ նրան տանում են Գնդափառոս արքայի մոտ: Վերջինս իմանալով, որ առաքյալը հմուտ է ճարտարապետության և շինարարության գործում, խնդրում է տաճար կառուցել և նրան է վստահում իր ունեցվածքը՝ ինքը հեռանալով այլ երկիր: Վերադառնալով իմանում է, որ առաքյալը իր ողջ ունեցվածքը բաժանել է աղքատներին, և բանտարկում է նրան: Սակայն, երբ արքայի եղբայրը մահանում է, առաքյալի աղոթքով վերակենդանանում է և պատմում, որ երկնքում տեսավ առաքյալի կառուցած տաճարը: Ս. Թովմասին մեծարում են և ականատեսը դառնում նրա գործած բազմաթիվ այլ սքանչելիքների: Տարիներ անց առաքյալը նահատակվում է Մժդեհ արքայի հրամանով: Աշակերտները նրա մասունքները տանում են Ասորեստան: Հետագայում, ասորա-պարսկական պատերազմի ժամանակ Ուսուֆ անունով պարսիկ զինվորականը որպես ավար վերցնում է մասնատուփը: Տե-

[45] **Լ. Թումանյան,** *նշվ. աշխ.*, էջ 20-21:

սիլքի համաձայն, տանում և ամփոփում է Վանա լճի ափին՝ Ռշտունյաց երկրում գտնվող Պարծիս գյուղում, և ինքն էլ դառնում քրիստոնյա[46]*։*

Մխիթարյան հայրերից Հ. Ոսկյանը մեզ է փոխանցել Ս. Թովմաս առաքյալի վանքի նկարագրությունը։ Վանքը գտնվում էր Վանա լճի ափին, վանքի մոտ էին Գանձակ և Մանազկերտ գյուղերը, հին Պարծիս գյուղի ավերակները։ «Անիկա պարսպապատ է եւ ունի տաճար մը, գաւիթ մը եւ քանի մը սենեակներ ու ախոռներ։ Տաճարը սրբատաշ քարերով շինուած է։ Արտաքուստ չափազանց պարզ։ Ունի ութանկիւն գմբէթ մը բրգաձև կաթուղիկէով, որուն գլուխը կը գտնուի նիզակ մը։ Կոզակը բոլորակաձեւ է՝ ռոմանական կամարով եւ զարդարուած ոսկեզօծ գեղեցիկ խաչկալով։ Կոզակի երկու կողմերը շինուած են մէկական աւանդատուններ։ Ասոնցմէ մէկուն մէջ ամփոփուած է Ս. Թովմաս առաքեալի նշխարը։ Արեւմտեան պատին կից կան նմանապէս երկու աւանդատուններ՝ նուիրուած Պետրոս եւ Պօղոս առաքեալներու։ Եկեղեցւոյ երկարութիւնն է՝ 11, լայնութիւնը՝ 7 եւ բարձրութիւնը՝ 7.50 մետր։ Գաւիթը սրբատաշ քարերով շինուած է։ Չորս ամբողջական եւ ութ կիսասիւներու վրայ կը բոլորուին պայտաձեւ կամարները՝ բռնելով թաղակապ ձեղունը»[47]*։*

Համադրենք մեկ հատված գանձից և Գրիգոր Խլաթեցու խմբագրած հայսմավուրքյան վարքից[48]*.*

<u>Թովմաս առաքյալի վարքը Հայսմավուրքում (այսուհետև՝ Վարք)</u>

Եւ եհարց ցԹումա, թէ զի՞նչ գիտես առնել։

Եւ նա ասաց՝ ի գործ քարի և փայտի ճարտար եմ ես, ի շինուածս տան և դարպասի։

<u>Թովմաս առաքյալին նվիրված գանձը (այսուհետև՝ Գանձ).</u>

Նոյն Գընդափառ եհարց Թումայի, թէ՝ խելամո՞ւտ ես կազմող յարկի,

Թումայ ասէ, թէ՝ ի գործ քարի եմ քաջ տեղեակ, տան եւ դարպասի,

<u>Վարք.</u>

Ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, և բացեալ զգանձատունն իւր, ետ ի նա բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, զի շինեսցէ իւր ապարանս թագաւորական գեղեցիկս և վայելուչս։ Զայս բանատեղ արար Թումայի արքայն և ինքն գնաց ի հեռաւոր աշխարհ։

<u>Գանձ.</u>

Յոյժ խընդացեալ Գընդափառոսի, բացեալ ըզգանձս ոսկոյ եւ արծաթի,

---

46 Տե՛ս *Յայսմաւուրք*, Նաւասարդի ԺԲ և Օգոստոսի ԻԲ, Կ.Պոլիս, 1730, էջ ԻԸ-ԻԹ։ Ս. Թովմաս առաքյալի վարքը Հայսմավուրքի մյուս խմբագրություններում տե՛ս *Համաբարբառ Յայսմաւուրք*, հ. Ը. Աւգոստոս, *աշխ.՝ Հ. Նիկողոսյանի*, Ս. Էջմիածին, 2009, էջ 268-273։

47 **Հ. Ոսկեան,** *նշվ. աշխ.*, էջ 148-149։

48 *Յայսմաւուրք*, Նաւասարդի ԺԲ և Օգոստոսի ԻԲ, Կ.Պոլիս, 1730, էջ ԻԸ-ԻԹ։

Ետ ի Թումաս ի պէտս տաճարի, եւ ինքն գընաց հեռաւոր տեղի,

Վարք.

Իսկ սուրբ առաքեալն Թումաս զգանձն ամենայն զոր էառ ի թագաւորէն, բաշխեաց աղքատաց և կարօտելոց: Ընդ որ մախայր եղբայր թագաւորին և ոչինչ կարէր առնել Թումայի:

Գանձ.

Սուրբ առաքեալն, որ Թումաս կոչի, բաշխեաց զգանձ նորա աղքատի,
Ընդ որ մախայր եղբայրն արքայի, ոչինչ կարէր առնել Թումայի,

Վարք.

Մինչ զի յառաւել մախանացն, որ վատնեաց զհայրենի գանձս թագաւորին, հիւանդացաւ մերձ ի մահ:

Եւ իբրև դարձաւ արքայն, և ետես զեղբայրն իւր հիւանդացեալ և զտաճարն ոչ շինեալ, բարկացաւ յոյժ, և ետ արկանել զառաքեալն ի բանտ:

Գանձ.

Ետես վատնեալ զգանձն իւր հայրենի եւ խաւթացեալ մերձ ի մահ մատի,
Արքայն զեղբայրն ետես ի ցաւի եւ ոչ շինեալ զպաղատն արքունի,
Յոյժ բարկացեալ սըրբոյն Թումայի եւ գան հարեալ էարկ ի բանտի,

Վարք.

Եւ եղև զի մեռաւ եղբայր թագաւորին, և Թումայ յարոյց զնա, և նա պատմեաց զգեղեցկութիւն դարպասին զոր Թումայ յերկինս շինեալ էր թագաւորին:

Վասն որոյ հանեալ զԹումա ի բանտէն, անկան յոտս նորա թագաւորն և եղբայրն իւր ամենայն մեծամեծօքն Հընդըստանայ:

Գանձ.

Իսկոյն մեռաւ եղբայրն արքայի, Թումա յարոյց անուամբն Յիսուսի,
Եւ նա պատմեաց զարմանք սըխրալի, զի էր կազմեալ տաճար տենչալի,
Անդէն անկեան ի յոտս Թումայի, հաւատացին յԱստուած կենդանի,
Ուրախութիւն եղեւ հոգելի Հընդըստանա երկրին ամենի,
Յետոյ բազում շատ ժամանակի Գընդափառոս առ Տէր փոխեսցի:

Այսպիսով, հնարավոր եղավ մեր ձեռագրական ժառանգության մեջ գտնել մեծանուն հայ տաղերգու Հովհաննես վարդապետ Բրգութենց Ոստանցու՝ Աղթամարի Ս. Խաչին և Ս. Թովմաս առաքյալին ձոնված չափածոները: Ձեռագրերից մեկը (ՄՄ 5404) քայքայված է, ունի թափված էջեր, ինչի հետևանքով պակասում են Ս. Թովմաս առաքյալին նվիրված գանձի սկիզբը և տաղը՝ գրեթե ամբողջությամբ: Աղթամարի Ս. Խաչին նվիրված գանձն ու տաղն ամբողջական են և մեզ հայտնի են մեկ ձեռագրով (ՄՄ 5521): Հովհաննես վարդապետ Բրգութենցի հեղինակած գանձերն ու տաղերն ունեն ոչ միայն գեղարվեստական ար-

ժեք, այլև բովանդակում են կարևոր պատմական և մշակութային փաստեր, աստվածաբանական գաղափարներ: Ակնկալում ենք, որ այլ ձեռագրերում ևս կգտնենք Հովհաննես վարդապետ Բրգութենցի վերոնշյալ գանձերը և տաղերը:

Ստորև ներկայացնում ենք Հովհաննես վրդ. Բրգութենցի Աղթամարի Ս. Խաչին և Թովմաս առաքյալին ձոնված գանձերն ու տաղերը[49]*:*

ԳԱՆՁ ԱՂԹԱՄԱՐԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ Ի ԲՐԳՈՒԹԵՆՑ ՅՈՎԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՈՍՏԱՆՅՈՅԷ (ՄՄ 5521, 429ա-431ա)

(429ա) Բարձրեալ անմնին, Արքայ վերնային,
Եռանձնական համագոյակին[50],
Ընձակերտեալ զհրեշտակք հըրաձին՝[51]
Քեզ արբանեակ յերկրորդ գալըստին:
Զազգըս մարդկան կազմեալ երկրային,
Իշխան և Տէր քում ձեռագործին,
Ետուր գիտել ըզկամս Քո հրամանին,
Խոտել ըզչարն և սիրել զբարին:
Պատրեալ զԱդամ վիրագ[52], պիղծ աւձին,

---

49 Բնագրերի ուղղագրությունը պահպանել ենք այնպես, ինչպես դրանք նշյալ ձեռագրերում են, թողել ենք անգամ տառասխալները՝ դրանք ծանոթագրելով տողատակին (հարկ է նշել, որ երբեմն հնչյունի բացակայությունն ու հավելագրումը պայմանավորված է բանաստեղծական հանգով): Ջնջված տառերը վերականգնել ենք սուրանկյուն փակագծերում, գրչի համառոտումները (տարբեր տների վերջում) ևս բացել ենք սուրանկյուն փակագծերում: «Օ» հնչյունի գրությունը թողել նույնը (և՛ օ, և՛ աւ), «ևս» շաղկապը երբեմն «և» է գրված, երբեմն՝ «ւ», մենք թողել ենք նույնությամբ՝ տաղաչափությունը չխախտելու համար, իսկ բառամիջում գրել ենք «ևս»:

50 Համանայն Քրիստոնեական Եկեղեցու վարդապետութեան, Մի Աստված է՝ եռաննյա՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, համագո, մի բնություն, մի էություն. «Հաւատամք զԵրրորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի Աստուածութիւն, ո՛չ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և անտեսանելեաց». *Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ*, Վաղարշապատ, 1902, էջ 2:

51 Քրիստոնեական Եկեղեցու վարդապետության համանայն՝ Հրեշտակները լուսեղեն, հրեղեն էակներ են՝ «Իսկ ի մէջ անտեսանելիցն արարեալ անտեսանելի փառաւորիչս - զաւրս հրեշտակաց հոգեղէնս, հրեղէնս, բազմութիւնք զուարթնոց». *Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի*, ՄՀ, Բ. հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1426:

52 Վիրագ - Վայրագ, գազանամիտ, արիւնահեղ, վայրենի և ամեհի. *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի* (ՆՀԲ), հ. Բ, կազմ.՝ *Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիրմէլեան, Հ. Մ. Աւգերեան,* Վենետիկ-Ս. Ղազար, 1837, էջ 825:

Որ բնակարան էր այսոց[53] դիւին,
(429բ) Ելար ի Խաչ // Քո Տէր կամովին,
Առ ոտս հարեր զվիշապն առաջին:
Մեզ պահապան է Խաչն Ելովին[54]՝
Պարիսպ ամուր ընդդէմ բանսարկուին,
Աղթամարայ Սուրբ Նշան Խաչին՝
Սուսեր և զէն դէմ բելիարին[55]:
Մեղաց բարձաւդ, մաքրարան հաւտին,
Դիմեցելոցս առ դըրունս Քոին,
Աստուածաբնակ Սուրբ Խաչ քաւարան,
Տեառն Աստուծոյ Ահեղ Սուրբ Նշան, աղաչեմք:
Բախարար սիրով բաղձալի,
Աստուածապսակ Գագիկ արքայի,
Ընտրեալ գոլով յազգէն Արծրունի,
Հաւատացեալ Աստուծոյն Քրկչի:
Ի հայրածագ ծայրագոյն սեռի,
Քար դաւանաս[56] համայն կայսերի,
Մըշտածաւալ յէէն բոխողի,
Հոսանք Հոգոյն[57] առ նա ժողովի:
Հիմունս արկեալ յԱղթամար կըղզի,
Շինեաց զտաճարն, որ Սուրբ Խաչ կոչի,
Բարձրաւանդակ ի պատշաճ տեղի,
Մէջ կապուտակ ծովուն որակի:
Տարփատենչ[58], բարի ամենայն ազգի,
Վիմաւ փակեալ և անշարժելի,

---

53 Այս – Ոգի չար կամ պիղծ, այն է դև. *ՆՀԲ*, հ. Ա., էջ 93: Զար ոգի, սատանայ, դև. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* Երևան, 2000, էջ 59:

54 Ելովէ - Աստծու անունը եբրայերեն. **Ս. Մալխասյանց,** *Հայերէն բացատրական բառարան*, հ. Ա., Երևան, 1944, էջ 554:

55 Բելիար – Իբր սեփական անուն սադայելի կամ բանսարկուին սատանայի. *ՆՀԲ*, հ. Ա., էջ 479: Սատանա. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* էջ 282:

56 Դաւանաս - խոստովանութիւն, հաւատալիք. **Ա. Կոռանեան**, *Բառգիրք հայերէն լեզուի,* Պէյրութ, 1998, էջ 95: *ՆՀԲ*-ում վկայված չէ:

57 Նկատի ունի Սուրբ Հոգու մշտնջենական բղխումը Հայր Աստծուց. «Հաւատամք զսուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ո՛չ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ». *Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ*, էջ 2:

58 Տարփատենչ - Շատ տարփալի՝ տենչալի. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* էջ 550:

Մեծատաշ, դերբկի[59] կոփածով քարի,
Երկաթագամ և անխախտելի:
Ի պակուցումն ենեռեռ[60], չար գնդի,
Որ են ներհակ մարդկային զարմի,
Աստուածաբնակ [Սուրբ Խաչ քաւարան,
Տեառն Աստուծոյ Ահեղ Սուրբ Նշան, աղաչեմք]:
Գրմբեթաւոր տաճար սքանչելի,
Աղթամարայ Սուրբ Խաչ գովելի,
Երկնագունակ վերամբարձ երկնի,
(430ա)Համաքատակ[61] // լուսոյն քաղաքի:
Սիւն մարմարեա, կարծր, անդրդուելի,
Հիմն արկեցաւ կամաւն Յիսուսի,
Տէրն երեւեալ ի վերա յայտնի,
Կընքեալ Աջովն Իւր անեղ[62] Բանի:
Առ դրունըս քո մըրգաբեր տընկի,
Աւազանին ծընունդ ցանկալի,
Աղթամարա Խաչ գերսքանչելի,
Արձան կանգնեալ ի մէջ ծովակի:
Երկնահանգէտ վայրի դալարի,
Թագաւորն ազն ի քեզ բնակի,
Դու նմանակ կենսատու Խաչի,
Որ ծաղկեցաւ ի Գողգոթայի:
Վահան ամուր հակառակ չարի,
Քրիստոնէից դու միշտ հովանի,
Աստուածաբնակ Սուրբ Խաչ [քաւարան,
Տեառն Աստուծոյ Ահեղ Սուրբ Նշան, աղաչեմք]:
Որ էնն Աստուած ի քեզ բնակի,
Կաթողիկէ Սուրբ Եկեղեցի,
Բազմապայծառ հրաշիւք ըղձալի,
Աւծումն և դրոշմ ի քէն ընձեռնի:
Դու անմատոյց խորան գերափի,

---

59 Դերբուկ – Ապառաժ. *ՆՀԲ*, հ. Ա, էջ 611: Առապար, քարերի կոյտ. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* էջ 360:

60 Ենեռեռ – Նենգաւոր, խարդախ. *ՆՀԲ*, հ. Ա, էջ 660 («ենեռեռնաշէն» բառի ներքո):

61 Համաքատակ – Համանման, յար և նման. *ՆՀԲ*, հ. Բ, էջ 24:

62 Անեղ – Որ չէ եղական, ինքնագոյ. *ՆՀԲ*, հ. Ա, էջ 138: Անստեղծ, չստեղծուած, ինքնագոյ. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* էջ 84:

Տէր Սաբաւովթ[63] ի բեզ գայ հանգչի,
Յանցաւորաց բաւարան ազգի
Եւ առագաստ բազմոց Քրիստոսի:
Վիմաւ մածեալ անդրդրդելի,
Մանուէլ կառոյց ձեռամբքն իւրովի,
Այսաւր մանկունք երգով բերկրալի
Պատուեն զհանդէս խաչին խրախալի:
Աղթամարա Սուրբ Խաչ պաշտելի,
Դու աւժանդակ քո պաշտաւնէի,
Հրազէն նշան, սուր ահեղակի,
Է նախընթաց Տեառն ամենակալի:
Աստուած[աբնակ Սուրբ Խաչ բաւարան,
Տեառն Աստուծոյ Ահեղ Սուրբ Նշան, աղաչեմք]:
(431բ) Իւրեղ, չքնաղ յարկ չնաշխարհի,
Զորեքանկեան և բառակուսի,
Հնձան փորեալ մէջ այգեստանի
Եւ աշտարակ միշտ անվանելի:
Որթըն սորեկ[64], ազնիւ, պիտանի
Քո սուրբ գաւիթս տնկեալ բուսանի,
Ժողով գնդի սուրբ մարգարէի,
Սուրբ առաքեալքն ի բեզ նըկարի:
Աւետարանիչք Նորոյս Կտակի
Կենդանագրեալ ի չորից կողմի,
Ազգի ազգի թոչունք թեւալի
Են նկարեալ յորմն տաճարի:
Այլեւ յոլով կենդանիք յայտնի
Սարսափելի մարդկան երեւի,
Հաւր անդրանիկն ի բեզ իջանի,
Իբր տաճարն Սողովմոնի:
Մայր ամենից տապանակ ուխտի,
Հրեղէն պարիսպ յԱղթամար կղզի,
Աստուածա[բնակ Սուրբ Խաչ բաւարան,
Տեառն Աստուծոյ Ահեղ Սուրբ Նշան, աղաչեմք]:

---

63 *Սաբաւովթ – Եբրայերեն՝ Աստծու ստորոգելի, նշանակում է «Տէր զօրութեանց». տե՛ս ՆՀԲ, հ. Բ, էջ 682:*

64 Սորեկ – Ազնիւ, պատուական, ընտիր. *ՆՀԲ*, հ. Բ, էջ 730:

Թագաւորաց գահ բարձր ի յերկրի,
Թագ բերկրանաց Հայոց մեծ ազգի,
Աթոռ փառաց, տեղ պատրիարգի,
Սրահ լուսոյ, ճեմարան Բանի:
Մերձ առ շիրմին վեհին Գրիգորի՝
Աստուածաբան սուրբ վարդապետի,
Որ հանգուցեալ ի Նարեկ գեղջի՝
Հուպ առ հիմըն սուրբ Սանդրխտի:
Հայրապետաց պարհըն զետեղի,
Մեծ ւ երջանիկ քաջ մետրապալտի,
Ի քեզ նստեալ տոհմէն Արծրունի,
Կաթուղիկոս հանուրց Հայկազնի:
(431ա)Սուրբ Միւռոնի նիւթն ի քէն // բաշխի,
Որ է նման Հոգոյն ճշմարտի,
Աւրհնեն Աջով սրբոյն Թումայի,
Որ մխեցաւ ի կողն Յիսուսի:
Դուռն երկնային հանգոյն Սինայի,
Ի քեզ բազմի Միածին Որդի:
Յիշեա: Եւ եւս: Զանձ.: [65]
Էին թագուհի դշխոյ Բարձրելոյն,
Աստուածամայր քոյ Աստուածորդոյն,
Ծնաւ զՔրիստոս Աստուած վեհագոյն,
Զգերերանեալ ընդ Հաւր և Հոգոյն:
ԶՏէրըն բոլորից բացափայլագոյն,
Կազմեալ զհրանիւթն յեղական լուսոյն,
Լեր մեզ առիթ, ժտեա քո յորդոյն
Պաղատանաւք մեծի Ամլորդոյն[66]:
Ստեփաննոսի Վկային նախնոյն,
Լուսաւորչին ի Պալհատունոյն[67],
Պահել զԱթոռս անվթարագոյն

---

65 Համառոտումը բացում ենք հիմք ընդունելով Ժամագիրքը. «Յիշեա, Տէ՛ր, եւ ողորմեա: Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք: Տո՛ւր մեզ, Տէր Աստուած: Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք» (*Ժամագիրք*, էջ 226):

66 Նկատի ունի Հովհաննես Մկրտիչ Կարապետին:

67 Տոհմանունը այսպես է գրված:

Ի դրանջելոյ[68] ապաստամբ այսոյն:
Ժողովրդեանս մեր միահաղոյն[69]
Տուր կեանս բարի հոգոյն և մարմնոյն,
Ննջեցելոցն ի տապան հողոյն,
Տեառնէ աոցեն զփառս հանդերձելոյն:
Ի յոբելեան քսան անցեալ թվոյն
Երսուն և հինգ ազգիս հակազոյն[70],
Յարմարեցաւ գանձս հրաշագոյն,
Աղթամարայ Խաչին բարձրագոյն[71]:
Ողորմեա[ց մեզ]:[72]

ՏԱՂ ԱՆՈՅՇ
Ի ԲՐԳՈՒԹԵՆՑ ՅՈՎԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՈՍՏԱՆՅՈ
(ՄՄ 5521, 431աբ)

(ի ստորին լուսանցս՝ «Սուրբ Ոսկի քահանայդ նազելի յայն ձայնէ»)

(431ա) **Յ**անգ ելեալ կազմեցար սուրբ խորան,
Յանշնչական յարձանաց վիմական,
Կառուցար Տեառնէն հանգըստեան,
Աղթամարայ սուրբ տաճար քաւարան:

(431բ) **Ո**ր յերջանիկ սուրբ գնդիցն հիմնեցար,
Յառաքելոց սուրբ դասուց հաստեցար,
Երանակրաւն գլխաւոր սուրբ պետաց խնկեցար,
Պաշտաւնէիցն Յիսուսի պատուեցար:

Վերնայարկ պատշգամ վարժարան,

68 Դրանջել – Գլուխ բարձրացնել, ապստամբել. **Ս. Մալխասյանց,** հ. Ա, էջ 544: ՆՀԲ-ում վկայված չէ:

69 Միահաղոյն – Միանգամայն, միահամուռ, բովանդակ ի միասին, խմբովին. *ՆՀԲ*, հ. Բ, էջ 266:

70 Գրված է այսպես, նկատի ունի՝ հայկազուն:

71 50 (յոբելեան) × 20 + 35 = 1035 Հայոց Մեծ թվ. + 551 = 1586 Փրկչական թվ.:

72 Համառոտումը բացում ենք հիմք ընդունելով Ժամագիրքը. «Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛» (*Ժամագիրք*, էջ 226):

Հրեղէն լեզուամ առաքելքն զմայլեցան,
Հրամանաւն Յիսուսի ի յերկիր շրջեցան,
Քարոզելով զՀին և զՆոր Կտակարան:

Անարատ սուրբ գառին զենարան անապական,
Սուրբ Մարմին և Արիւն ի Տեառնէ բաշխեցան,
Սուրբ դահլիճ, առագաստ բնակութեան,
Աղթամարայ կենագործ ձօնարան:

Ներծագումն նախընթաց Քրիստոսի,
Կործանիչ եղեռնագործ չար դիւի,
Հոյակապ յԱղթամար քաղաքի,
Կարկաչասահ կոհակացրն միջի:

Նախագահ Աստուածընկալ բուժարան,
Ներկեցար յԱրենէ Տեառնական,
Գերահրաշ գերագով սրբութեան
Իմանալի քաղաքին նմանական:

Եռանելի արփիափայլ սուրբ Նշան,
Վաւերական Տեառն Աթոռ բարձրական,
Աղթամարայ ահեղահրաշ Սուրբ Նշան,
Տօնողացս համաւէն աւգնական:

Սուր մխեալ յարենէն Քրիստոսի,
Ի նորոգումն մարդկային միշտ զարմի,
Զորեմկողմեան տիեզերաց աշխարհի,
Որք տօնեն զհանդէս տաճարիդ գահոյի:

[ԳԱՆՁ ԹՈՒՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
Ի ԲՐԳՈՒԹԵՆՑ ՅՈՎԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՈՍՏԱՆՅՈՅԷ]
(ՄՄ 5404, 211ա-213բ)

(211ա) (Սկիզբը թափուած)/// մըխեաց,
Զքեզ վաճառեմ առս այսմիկ Հընդկաց, որ է եկեալ ի յարեւելեաց,
Ասաց Թումաս՝ Կամք քո եղիցի, Տէր, Արարիչ Յիսուս իմ Աստուած,

Վրկայ առեալ զորդի
ս Զեբեթեա[73] և ըզՊետրոս, զոր Վէմ անուանեաց,
Ես՝ Տէր Յիսուս ի Կուսէն ծընած, որ Յովսեփա զիս որդի ձայնեաց,
Դահեկանի երրակի տասանց վաճառեցի գըրով ձեռնարկած,
Յուղի անկեալ Արբանէս գնաց, տարեալ զԹումաս ի սահմանս
Հընդկաց:
Աղերսանաւ սրբոյ[ն]:
Անդ ի յերկիրըն Հընդըստանա, Սեդրակ անուն քաղաքն, որ անդ կայ,
էր հարսանիս յայնմ աւուր նոցա արքաորդւոյն կայսրին Սեդրակայ,
Տարան զԹումաս հարկիւ առ նոսա, նըստէր տըրտում ի միջի նոցա:
Եւ բարկացեալ մատըռուակ նըմա, էած ապտակ ի յերեսս նորա:
Թումաս անէծ զայրագին նմա, շունք քարշեսցեն ըզբազուկ նորա,
Իսկոյն գնացեալ բերել ջուր նոցա, պատահեցաւ առիւծ մի նըմա,
(211բ) Եւ պատառեալ գիշատեաց ըզնա, աստէն առեալ // զցաւն
առհաւատչա,
Զոր կինիկոս[74] առեալ զձեռն նորա, բերեալ ի մէջ բազմոցին ըզնա,
Եւ յարուցեալ անկան յոտս նորա, աւրհնեաց ըզհարսն և զփեսայն նորա,
Իսկ Արբանէս տարաւ ըզԹումա առ թագաւորըն Գընդափուռա:
Աղեր[սանաւ սրբոյն]:
Նոյն Գընդափառ եհարց Թումայի, թէ՝ խելամո՞ւտ ես կազմող յարկի,
Թումայ ասէ, թէ՝ ի գործ քարի եմ քաջ տեղեակ տան և դարպասի,
Յոյժ խընդացեալ Գընդափառոսի, բացեալ ըզգանձս ոսկոյ ւ արծաթի,
Ետ ի Թումաս ի պէտս տաճարի, ւ ինքըն գընաց հեռաւոր տեղի,
Սուրբ առաքեալն, որ Թումաս կոչի, բաշխեաց զգանձ նորա աղքատի,
Ընդ որ մախայր[75] եղբայրն արքայի, ոչինչ կարէր առնել Թումայի,
Ետես վատնեալ զգանձն իւր հայրենի և խաւթացեալ մերձ ի մահ մաւտի,
Արքայն զեղբայրն ետես ի ցաւի և ոչ շինեալ զպաղատն արքունի,
Յոյժ բարկացեալ սըրբոյն Թումայի և գան հարեալ էարկ ի բանտի,
(212ա) Իսկոյն մեռաւ եղբայրն արքայի, Թումա յարոյց // անուամբն
Յիսուսի,
Եւ նա պատմեաց զարմանք սքիրալի, զի էր կազմեալ տաճար տենչալի,
Անդէն անկեան ի յոտս Թումայի, հաւատացին յԱստուած կենդանի,

73 Զեբեդեոսի որդիներն են Հովհաննես և Հակոբոս առաքյալները:

74 Կինիկոս (հուն. κυνικός) – Շուն, շնական. **Ս. Մալխասյանց,** *Հայերէն բացատրական բառարան*, հ. Դ, Երևան, 1945, էջ 436: Հայսմավուրքյան վարքում գործածված է «շուն» բառը. Յայսմաւուրք, էջ ԻԹ:

75 Մախալ – Նախանձել, խանդել, չարակնել. *ՆՀԲ*, հ. Բ, էջ 189:

Ուրախութիւն եղեւ հոգելի Հընդըստանա երկրին ամենի,
Յետոյ բազում շատ ժամանակի Գընդափառոս առ Տէր փոխեսցի:
Աղերսանաւ [սրբոյն]:
Նոր թագաւոր մի Մըշդեհ ձայնեալ, բան զբանսարկուն, այլ չար ւ անիծեալ,
Նա չարչարեալ զԹումա առաքեալ և աշտէիւ ի կողըն խոցեալ,
Ուստի եկեալ նոր հաւատացեալ, բարձին զմարմին աւրհնութեամբ թաղեալ,
Իսկ արքային որդիքն, որ ընտրեալ, զոր Սուզանէս, Սիփորայ կոչեալ,
Տեսին զԹումաս, որ նահատակեալ, և ի հաւատս հաստատուն կացեալ,
Ի ծառայցն ոմն այսահարեալ, չար Մըշդեհա ի դիւէն լըլկեալ,
Յառաքելոյ տապանըն դիմեալ և առժամայն անդէն ոչ գըտեալ,
Զի աշակերտ սըրբոյն թագուցեալ, յետ այնորիկ յԱսորիս տարեալ,
(212բ) Ի տապանէն սըրբոյն հող առեալ և // ի վերա ծառային արկեալ,
Ընդ որ փութով յոյժ առողջացեալ ի տապանէ սըրբոյն բըժըշկեալ:
Աղերսանաւ սրբ[ոյն]:
Էանց տարի, յետ ժամանակի ասպատակեալ Պարսիցն յԱսորի,
Գնացեալ հասին Թաղթան քաղաքի, ուր էր մարմին սըրբոյն Թումայի,
Նախարար ոմն, որ Ուսուֆ կոչի, տեսեալ զտապան սըրբոյն Թումայի,
Էր զարդարեալ յոյժ զարմանալի, ընդելուզեալ[76] յոսկոյն կեփազի,
Զոր իմացեալ, թէ գանձ լինիցի, պահեաց առ ինքն մինչ երեկոյի,
Եբաց ետես ինքըն մեկուսի, զի էր ոսկեր մարդոյ մեռելի,
Զի ոչ ունէր զհաւատս Քրիստոսի, կարծէր նըշխար զնա նահատակի,
Յրուեաց ի յոտս ձիոցն ամենի և առաթուր արար[77] բընաւի,
Զոր զոփացեալ[78] ի նոյն գիշերի, զարթեաւ ետես վառ նման ջահի,
Եւ ամփոփեալ եդ ի յարկեղի, բերեալ ի յայս ի գաւառն Աղձնի,
Մերձ ի յայն շէն, որ Վան յորջորջի և հաւատաց Ուսուֆ Քրիստոսի,
Դարձեալ կամաւ սըրբոյն Թումայի, տարեալ զմարմին ի յայլում վայրի,
(213ա) Աստղն // երեւեալ լուսափայլ յայտնի դէպ յարեւելս յերկիրն ըՌըշտունի,
Եւ դադարեալ աստղն ի յայն բլրի, վերա գեղջին, որ Պարծիս կոչի,
Եւ անդ եդին զնըշխար Թումայի, ի վիմափոր քարեայ տապանի,

---

76 Ընդելուզել – Ագուցանել ընդ միմեանս կամ ի մի շար, հիւսել, յարել. *ՆՀԲ*, հ. Ա., էջ 770:
77 Առաթուր անել – Կոխկրտել, ոտքի տակ առնել. *ՆՀԲ*, հ. Ա., էջ 282:
78 Զոփալ – Դողալ, սարսալ. *ՆՀԲ*, հ. Ա., էջ 751: Դողալ, դողդողալ, սարսալ, սարսափել, զարհուրել. **Ռ. Ղազարյան,** *Գրաբարի բառարան,* էջ 450:

Զոր և յետոյ Արծրունեաց տոհմի, զնա կառուցին տաճար տենչալի,
Եւ փարատիչ մարդկային ախտի, ըՌՐշտունեաց երկրին [ամե]նի:
Յիշեայ: Եւ եւս առ[աւել]: Զանձինս:[79]
Սուրբ մայր Միածնին՝ Կոյս Աստուածածին, լուծիչ մեղաց մաւրն
յանցաւորին,
Սգեստ լուսանիւթ երկնից արքային, յարկ ճեմարան անեղ կազմողին,
Մայր և ծընաւղ Աստուծոյ Բանին, և տաղաւար Հոգւոյն ճըշմարտին,
Կերակերեցեր կաթեամբ զքո զորդին, այն որ պատկեր է Հաւրն
երկնային,
Միշտ աղաչեա զքո Աստուածորդին՝ մեզ պարգեւէ զհանգիստն
երկնային,
Կոյս և անախտ սըրբոյն Թումային, որ յիշատակ սորին կատարին,
Սուրբն Յովաննէս լըրումն զստուերին և Ստեփաննոս ցելեալ ըզերկին,
Սուրբըն Գրիգոր արհի պանծալին՝ լուսաւորիչն ազգիս Արամին,
(213բ) Լուսա//ՆԸշոյլ Խաչն աստուածային, միշտ յարակա սուրբ
Կոյս քեզ լիցին,
Եւ ամենայն դասք սըրբոց գընդին՝ երկնաւորեաց և որք երկրային,
Առ քեզ կըցորդ ցանկ զամենեսին, բարեխաւսեա առ քո Միածնին,
Պահել անշարժ զսուրբ զեկեղեցի, եւս առաւել զազգս ապատեսին(՞),
Գրքայ երգող գանձիս Թումային ի Յովաննէս յիմար ւ անարին,
Որ մականուն Բըրգութ ձայնէին, մեղաւք անկեալ ի ծուղակ չարին,
Փրկեա զմեզ, Տէր, ի հաղբից նորին, խառնէ ի դասս սըրբոցն երամին,
Հոլովական թըվիս տումարին հազար ու քսան և ութ ընդ նմին[80],
Նոր երգեցաւ գանձըս Թումային, զեղանակողքդ աւրհնէ Բանըն
Հայրածին:
Ողորմեաց մեզ[81]:

---

79 Համառոտումը բացում ենք հիմք ընդունելով Ժամագիրքը. «Յիշեա, Տէ՛ր, եւ ողորմեա: Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք: Տո՛ւր մեզ, Տէր Աստուած: Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք» (*Ժամագիրք*, էջ 226):

80 1028 + 551 = 1579 Փրկչական թվ.:

81 Համառոտումը բացում ենք հիմք ընդունելով Ժամագիրքը. «Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛» (*Ժամագիրք*, էջ 226):

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՒՄԱՅԻ,
Ի ԲՐԳՈՒԹԵՆՑ ՅՈՎԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՈՍՏԱՆՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ
(ՄՄ 5404, 213բ)
Վայ է ինձ մեղաւորիս:
Յանեղէն կազմեցան արարածք,
Հայր և Որդի և Սուրբ Հոգին բնաւ[ս էա]ծ,
Զառաքեալսն ի ծովէն Տէր կոչեաց
Եւ նոքաւ ըզմարմին դիկք վերածեաց:
Որում և սուրբ առաքելքն Թումաս///(շարունակությունը թափուած):

LUSINE TUMANYAN

THE LITANIES AND ODES OF YOVHANNĒS BRGUT‘ENTS‘

Key Words: Yovhannēs Brgut‘ents‘, Vostan city, *gandz* (litany), *tagh* (ode), manuscript, Aght‘amar island, Surb Khach (Holy Cross) church, Apostle Thomas.

The article contains the first publication of the *gandzs* (litanies) and *taghs* (odes) of the famous Archimandrite Yovhannēs Brgut‘ents‘, which we have found in manuscripts. They are dedicated to the Church of Aght‘amar island and Apostle Thomas. We found information that one of the manuscripts taken from the Narek Monastery to Aght‘amar contained Yovhannēs’s litanies. According to another source, another manuscript kept in Aght‘amar contained a *gandz* and a *tagh* of the same author.

We tried to find these manuscripts. There is a manuscript, written in 1440 in Vostan, which Ghevond P‘irghalemyan saw in the Narek Monastery in 1866. It was taken to the Aght‘amar Monastery, and in 1915–1916, during the Genocide, it was rescued and brought to Holy Ēchmiadzin. Now it is Ms M5404. In the 17th century, the *gandz* of Yovhannēs Brgut‘ents‘ dedicated to Apostle Thomas was written on the last pages of this manuscript.

As for the manuscript that Archimandrite Ghevond saw in Aght‘amar in 1602, it is certainly the same manuscript written by T‘uma Minasenets‘ in 1445 in Aght‘amar (M5521). In 1602, the gandz and the tagh of Yovhannēs Brgut‘ents‘ dedicated to the Church of Surb Khach (Holy Cross) in Aght‘amar were added on the last pages of this manuscript.

ЛУСИНЕ ТУМАНЯН

ГАНДЗЫ И ТАГИ ОВАНЕСА БРГУТЕНЦА

Ключевые слова: Ованес Бргутенц, город Востан, *гандз, таг,* рукопись, остров Ахтамар, церковь Сурб Хач (Св. Крест), апостол Фома.

В статье впервые публикуются обнаруженные нами гандзы (церковные песнопения) и таги (оды) известного архимандрита Ованеса Бргутенца, посвященные церкви на острове Ахтамар и апостолу Фоме. До нас дошли сведения, что одна рукопись, вывезенная из Нарекского монастыря в Ахтамар, содержит песни Ованеса Бргутенца. Согласно другому источнику, в другой рукописи, хранящейся в Ахтамаре, содержится гандз и таг Ованеса Бргутенца.

Мы попытались найти эти рукописи. Есть рукопись, написанная в 1440 году в Востане, которую Гевонд Пиргалемян видел в Нарекском монастыре в 1866 году. Спустя годы она была перевезена в Ахтамарский монастырь. В 1915-1916 гг., во времая Геноцида, рукопись была спасена и перевезена в Святой Эчмиадзин, а сейчас находится в Матенадаране имени Месропа Маштоца (М 5404). На последних страницах этой рукописи в XVII веке был написан гандз Ованеса Бргутенца, посвященная апостолу Фоме.

Что касается рукописи, которую архимандрид Гевонд видел в Ахтамаре в 1602 году, мы уверены, что это та самая рукопись, которую Тума Минасенц скопировал в 1445 году в Ахтамаре (ММ 5521). В 1602 г. на последних страницах этой рукописи были добавлены гандз и таг Ованеса Бргутенца, посвященные церкви Сурб Хач (Святой Крест) на острове Ахтамар.